

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

#### 01.01.2020-30.06.2020 Ժամանակահատվածի համար

1. Դպրոցներից ստացվել և կազմվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական համակազմի ցանցային տվյալները: Դրանք մարզպետի կողմից հաստատվելուց հետո ներկայացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Մարզի 48 հանրակրթական դպրոցներում աշակերտների թիվը կազմել է 6474, որից 729-ը ավագ դպրոցներում:
2. Ստուգվել և մարզպետի հաստատմանն է ներկայացվել հանրակրթական դպրոցների տարիֆիկացիոն ցուցակները:
3. Մարզի դպրոցներում աշխատում են 875 ուսուցիչներ, որոնցից 831-ը բարձրագույն մանկավարժական կրթությամբ:
4. Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12-րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին:
5. Դպրոցներից հավաքագրվել ամփոփվել և դասագրքերի շրջանառու հիմնադրամ է ներկայացվել 2020-2021 ուսումնական տարվա դասագրքերի պատվերը:
6. Մարզի 4 ուսուցիչներ ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար հրամանով ստացել են որակավորման 1-ին աստիճանի տարակարգ:
7. Մարզպետի հաստատմանն է ներկայացվել Շատինի միջնակարգ և Գողթանիկի հիմնական դպրոցների կառավարման խորհուրդների կազմերում անդամների փոփոխությունների մասին որոշումները:
8. Աջակցություն է ցուցաբերվել գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից միասնական քննությունների կազմակերպմանը:
9. Շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի լրացման համար կազմվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել 12-րդ դասարանի շրջանավարտների ճշտված անվանացանկը և 9-րդ դասարանի շրջանավարտների ճշգրտված թիվը: 2019-2020 ուսումնական տարում 9-րդ դասարանն ավարտել են 473, իսկ 12-րդ դասարանը՝ 245 շրջանավարտներ: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացվել և դպրոցներին է բաշխվել նրանց ավարտական փաստաթղթերը (ատեստատներ, վկայականներ): Մարզի հանրակրթական դպրոցների 5 շրջանավարտներ հաջողությամբ հանձնել են ավարտական մաթեմատիկայի քննությունը և արժանացել գերազանցության մեդալի:
10. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և ընթացք է տրվել դիմումներին, որոնք հանձնարարվել է վարչությանը:

11. Մարզի 8 դպրոցներին հատկացվել է մարզագույք (մարզապատեր, ցատկահարթակներ, այծիկներ):
12. ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել կորած ավարտական փաստաթղթերի (ատեստատներ, վկայականներ) կրկնօրինակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ստացել և հանձնվել են դպրոցներին լրացնելու և կորցնողին տրամադրելու համար:
13. Վարչության աշխատակիցները դիտորդի կարգավիճակով մասնակցել են դպրոցներում անցկացվող ուսուցչի և դպրոցի գործադիր տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթներին: Սահմանված կարգով գործադիր տնօրենի մրցույթներ են անցկացվել Գետափի, Թառաթումբի, Մարտիրոսի, Հերիերի և Ռինդի միջնակարգ դպրոցներում:
14. Համագործակցելով բնակչության հաշվառման պետական ռեգիստրի, ՔԿԱԳ բաժինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումը հանրակրթության մեջ:
15. Ս/թ մարտի 13-ից կորոնավիրուսային համավարակի պատճառով հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարվելուց հետո կազմակերպվել է առցանց հեռավար կրթությունը: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին Յուքոմ, Վիվա ՄՏՍ ընկերությունների և Իմ քայլը հիմնադրամի կողմից նվիրաբերվել է 594 գրասալիկ, բջջային հեռախոս և նեթբուք: Հեռավար ուսուցումից տեխնիկական պատճառներով երեխաներ դուրս չեն մնացել:
16. Արտակարգ դրության ժամանակահատվածում անցկացվել են ֆիզկուլտուրայի տեսադասեր: Լավագույն տեսադասերի մրցույթում մարզի 2 դպրոցների աշակերտներ արժանացել են մրցանակի:
17. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տեսակապով կազմակերպված խորհրդակցության ժամանակ հանձնարարականներ են տրվել արտակարգ դրության պայմաններում մարզական և մշակութային միջոցառումների անցկացման ձևաչափի ընտրության վերաբերյալ: Ըստ այդմ միջոցառումներ կազմակերպվում են միայն այն դեպքում, երբ ամբողջովին պահպանվում են պարետատան կողմից սահմանված կանոնները:
18. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը նպատակային ընդունելության հայտերը:
19. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել համայնքային ենթակայությամբ մարզադպրոցների մարզագույքի պահանջարկը:
20. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել երաժշտական և արվեստի դպրոցների բյուջետային հատկացումների հաշվետվությունները:

Վայոց ձորի մարզպետարանի կրթության,  
մշակույթի և սպորտի վարչության պետ՝

Ա. Ղազարյան